ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 դեկտեմբերի 2025 թվականի N 1969 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N 596-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) որոշման 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4.1-ին ենթակետով.

«4.1) միջին ռիսկայնության աստիճանի (II կատեգորիա) ոչ ձեռնարկատի-րական նպատակով կառուցվող անհատական բնակելի տների (առանձնատների, մենատների) և դրանց օժանդակ նշանակության շինությունների նախագծային

փաստաթղթերի մշակման, շինարարության թույլտվության տրամադրման, շինարարական աշխատանքների իրականացման և ավարտված շինարարության շահագործման փաստագրման պարզեցված կարգը՝ համաձայն N 4.1 հավելվածի.».

2) որոշման N 1 հավելվածում՝

ա. 4-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 29-րդ ենթակետով.

«29) **տեխնիկական հետազննություն՝** քաղաքաշինական օբյեկտների տեխնիկական վիճակի ուսումնասիրությունը շենքերի անվտանգության, ամրության և երկարակեցության որոշման, դրանց հուսալիության գնահատման, անվտանգ շահագործումն ապահովելու ուղղությամբ համապատասխան միջոցառումներ, այդ թվում՝ կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու համար որոշում կայացնելու, վերանորոգման և վերակառուցման, քանդման, իսկ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների դեպքում՝ ամրակայման, նորոգման, վերականգնման կամ բացառիկ դեպքերում փոփոխման վերաբերյալ եզրահանգումների և համապատասխան աշխատանքների պլանավորման նպատակով:»,

բ. 27-րդ կետի 2-րդ ենթակետում «շինարարական կազմակերպության երաշխավորագրով» բառերից հետո «.» կետադրական նշանը փոխարինել «:» կետադրական նշանով և լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«N 4.1 հավելվածում նախատեսված դեպքում նախագծային փաստաթղթերի փորձաքննությունը փոխարինվում է նախագծող կազմակերպության երաշխավորագրով, որով միաժամանակ հավաստվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին, իսկ շինարարության որակի տեխնիկական հսկողությունը փոխարինվում է տեխնիկական հետազննության եզրակացությամբ:»,

գ. 132-րդ կետը «II կատեգորիայի» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն որոշման N 4.1 հավելվածում նախատեսված դեպքի» բառերով,

դ. 138-րդ կետը «23.1-ին կետով» բառերից հետո լրացնել «և N 4.1 հավելվածով» բառերով,

ե. 144-րդ կետը «դրական եզրակացությամբ» բառերից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«N 4.1 հավելվածում նախատեսված դեպքում կառուցված օբյեկտի շինարարության որակի տեխնիկական հսկողությունը փոխարինվում է, և օբյեկտի շինարարության ավարտն ու շահագործման ենթակա լինելու փաստը երաշխավորվում կամ հավաստվում է տեխնիկական հետազննության դրական եզրակացությամբ:».

3) որոշումը լրացնել նոր՝ N 4.1 հավելվածով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունիսի 1-ից:

3. Սահմանել, որ սույն որոշման գործողությունը՝ ավարտված շինարարության շահագործման փաստագրման մասով, տարածվում է այն կառուցապատողների նկատմամբ, ովքեր դիմել են համապատասխան համայնքի ղեկավարին և ստացել շինարարության թույլտվություն՝ ինչպես մինչ urban.e-gov.am քաղաքաշինության ոլորտի թվային ծառայությունների հարթակի գործարկումը, այնպես էլ urban.e-gov.am քաղաքաշինության ոլորտի թվային ծառայությունների հարթակի միջոցով՝ դրա գործարկումից հետո:

4. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահին՝ մինչև 2026 թվականի հունիսի 1-ը ապահովել հարթակի սույն որոշմամբ պայմանավորված անհրաժեշտ տեխնիկական փոփոխությունների կատարումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

26.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ